ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 17 » օգոստոսի 2021 թվականի N: 245-Ա ք.Գյումրի

ՌՈՒԲԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգի» 6.2-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Ռուբեն Հակոբյանի և Սուսաննա Սանոսյանի 2021 թվականի օգոստոսի 12-ի դիմումները.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. «Մայիսյանի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Ռուբեն Հակոբյանին տրամադրել 20 աշխատանքային օր ամենամյա նվազագույն արձակուրդ՝ 2021 թվականի օգոստոսի 19-ից մինչև սեպտեմբերի 15-ը ներառյալ:
2. Ռուբեն Հակոբյանի արձակուրդում գտնվելու ընթացքում «Մայիսյանի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել Սուսաննա Սանոսյանին:

Հ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է